

ՀՀ Ազգային ժողովի մեծահա՛րգ պարոն նախագահ,  
Հարգարժա՛ն փոխվարչապետ,  
Գերաշնո՛րհ, հոգեշնո՛րհ հայրեր, սիրելի՛ ներկաներ,

Հայոց պետության և սփյուռքի գլխավոր հիմնախնդիրներից մեկը եղել և շարունակում են մնալ հայապահպանության հիմնահարցերը: Ակնհայտ է, որ հարափոփոխ աշխարհում գնալով փոքրանում, ուժացվում են հայկական համայնքները: Ինչպես գիտեք մեր համաժողովի գլխավոր ուղղություններից մեկը նվիրված է հայապահպանության հիմնախնդիրներին: Այդ ուղղության նիստերում մասնակիցների հիմնական հարցադրումներն ու մտահոգությունները վերաբերում էին այն խնդիրներին, որ հայկական համայնքներում մեր շատ ու շատ հայրենակիցներ հեռանում են համայնքային կյանքից, նրանք չեն մասնակցում համայնքի գործունեությանը և դրանով ուժացման գործընթացը արագանում է, ավելանում են խառնամուսնությունները, պակասում է հայերեն խոսողների թիվը:

Մինչև բուն հիմնախնդրին անդրադառնալը, ես կուզենայի մի քանի թվեր բերել ընդհանրապես սփյուռքների մասին, մասնավորապես հայկական սփյուռքի ներկա վիճակի, մեր կազմակերպությունների ու կառույցների թվաքանակի և մեր այն ահռելի ուժի և այն մասին, որ մենք եթե շարունակենք համատեղ, միասնաբար, պատասխանատու ձևով մեր նպատակապահ գործողությունը, ապա կկարողանանք մեր տիրույթ բերել շատ ու շատ հայերի, կպայքարենք ուժացման դեմ: Եթե այսօր դիտարկելու լինենք աշխարհում տեղի ունեցող միգրացիոն գործընթացները, ապա պետք է ասեմ, որ ՄԱԿ-ի տվյալներով գաղթականների և փախստականների թիվը աշխարհում հաշվում է 244 մլն. մարդ, որից վերջին 15 տարիներին 71 մլն.-ը դարձել է փախստական, իսկ դա նշանակում է, որ աշխարհի բնակչության 3.3% անընդհատ տեղաշարժման մեջ է: Տեղի ունեցող աղետների, հակամարտությունների, բռնությունների, ռեժիմների պատճառով նաև երկիր մոլորակի յուրաքանչյուր 35-րդ մարդը միգրանտ է դառնում: Եվրոպայում 76 մլն մարդ չի ապրում իր ծննդավայրում, նույնը՝ Ասիայում՝ 76 մլն-ը և Հյուսիսային Ամերիկայում՝ 54 մլն-ը: Աշխարհում գոյություն ունեցող խոշորագույն սփյուռքներն են չինական սփյուռքը, աֆրոամերիկյանը, հունականը, իտալականը, լիբանանյանը, հայկականը, հրեականը, թուրքականը և այլն:

Հայկական սփյուռքը իր ձևավորման տարբեր փուլերն է անցել, և դուք գիտեք, որ մինչև Հայոց ցեղասպանությունը մեր հայրենակիցները տեղաշարժվել են աշխարհի տարբեր երկրներով: Սակայն ամենամեծ տեղահանությունը մոտ 400 տարի առաջ Նոր Ջուղայի ստեղծման ժամանակահատվածում էր: Բհարկե, հայկական սփյուռքը հետևանք է Հայոց ցեղասպանության, որի ժամանակ ստեղծվել են այն խոշորագույն համայնքները, գաղութները, որոնք այսօր շարունակում են գործել շատ ու շատ երկրներում: Սփյուռքի կառուցվածքի վրա էական ազդեցություն են 3

հայրենադարձությունները, որոնք գլխավորապես փոխել են սփյուռքի պատկերը: Իսկ 1991թ. Հայաստանի անկախացումից հետո տեղաշարժեր են եղել Հայաստանից, ինչի արդյունքում սփյուռքում նոր վերադասավորումներ են եղել: Հայաստանից արտագաղթը 1990-ական թվականներին կարելի է բաժանել 4 հիմնական ուղղությունների.

Առաջինը՝ այն մարդիկ էին, որոնք ժամանակին հայրենադարձվել էին, չէին հարմարվել խորհրդային համակարգին և երբ սահմանները բացվեցին, նրանց մի մասը հեռացավ:

Երկրորդ խումբը՝ այն մարդիկ էին, որոնք Ադրբեջանական բռնաճնշումներից հասել էին Հայաստան, և նաև երկրաշարժի հետևանքով չունեին այսպես ասած տանիք իրենց գլխի վրա, և նրանց մի մասը նույնպես հեռացավ:

Երրորդ խումբը՝ այն մարդիկ էին, որոնք չդիմացան 90-ականի տնտեսական դժվարություններին:

Չորրորդ խումբը, իհարկե, արևմուտքում պահանջարկ ունեցող մեր երիտասարդներն էին, այսպես կոչված՝ ուղեղների արտահոսք տեղի ունեցավ: Այնուհետև տարբեր պատճառներով տեղաշարժեր տեղի ունեցան Միջին Արևելքից, և հիմնականում նրանք հարստացրին եվրոպական, ամերիկյան և ավստրալական տարածքներում մեր հայկական համայնքները: Հայաստանից դուրս ապրում է 7 մլն. հայ, բայց անպայման դրան պետք է ավելացնենք 2մլն. իսլամացված, ծպտյալ հայերին, որոնք այսօր՝ ներկա իրավիճակում, փոփոխվող աշխարհում արդեն չեն վախենում խոսել իրենց ինքնության մասին:

Հայերը տեղաբաշխված են անհավասարաչափ տարբեր երկրներում: Հիմնական խոշոր տարածքներն են ԱՊՀ երկրները, Ուկրաինան, Ամերիկան, Եվրոպան նաև Մերձավոր Արևելքը, Վրաստանը: Մենք, մոտավորապես, ունենք 117 երկրներում հայկական համայնքներ, որոնք ունեն տարբեր կառուցվածք և տարբեր իրավական կարգավիճակ: Նրանց մի մասը կրոնական համայնքներն են, մյուս մասը ազգային փոքրամասնություններն են, երրորդ խումբը ազգային-մշակութային ինքնավարություններն են, չորրորդ խումբը հասարակական կազմակերպություններն են և այլն: Մենք ունենք քաղաքներ, գյուղեր, որոնք ամբողջապես հայաբնակ են: Ուզում եմ ընդգծել, որ մեզ՝ հայերիս բնորոշ է օտար իրավիճակներում արագ ինտեգրվելը, տվյալ հասարակությունների սոցիալ տնտեսական, մշակութային կյանքին մասնակցելը և իհարկե, ազգային դիմագիծն ու ազգային կերպարը պահպանելը: Իրենց գործունեությամբ նրանք ակտիվորեն ներգրավվում են տվյալ երկրների հասարակական, քաղաքական, տնտեսական կյանքում, և նաև հեղինակություն ստեղծում, հայի, հայության և Հայաստանի համար: Դրա համար շնորհակալ ենք ձեզ՝ ձեր գործունեության և ձեր աշխատանքների համար:

Մենք տարբեր երկրներում և քաղաքներում ունենք 829 համայնք, 30 հազար հայկական կազմակերպություն, 38 համահայկական կազմակերպություն, 724 գործող եկեղեցիներ, վանքեր, 1004 մեկօրյա և ամենօրյա դպրոց, 34 թանգարան, 103 հայագիտական կենտրոն, 40-ից ավելի երկրներում 300-ից ավելի գործող լրատվամիջոց, 637 մշակութային կենտրոն, որոնք, փաստորեն, հազարավոր երեխաների են ներգրավում իրենց գործունեության մեջ: Այս թվերը փաստում են, թե մենք ինչպիսի հզոր կառուցվածքային միավորներ ունենք, որոնք մեր հարստությունն են, դրանք ստեղծվել են, գործում են հայապահպանության նպատակով: Գաղտնիք չէ, որ հայապահպանության գլխավոր թիրախը՝ դա երիտասարդությունն է, որին հայ պահելու համար է, որ պետք է համախմբենք մեր ուժերը, գիտելիքներն ու կարողությունները: Այնուամենայնիվ, որոնք են այն հիմնական խնդիրները, որոնց հետ և՛ համաժողովի ընթացքում և՛ իհարկե, աշխատանքային գործունեության ընթացքում մենք բախվում ենք:

Հայկական համայնքները տեղաշարժվում են հատկապես Միջին Արևելքից և փոքրանում են: Հայերը աշխարհում ամենասփռվածն են, քանի որ խոշոր սփյուռք ունեցող երկրները 10,20,30 երկրներում ունեն համայնքներ, իսկ մենք 117 երկրներում: Սա և՛ դրական է, և՛ բացասական՝ աշխատանքները կազմակերպելու համար: Կա սերտ գործակցության բացակայություն Հայաստանից մեկնած և հին, դասական, սփյուռքի միջև: Ինքնակազմակերպման խնդիր ունենք որոշ տարածքներում: Արդեն շեշտեցի և մեր հայրենակիցները տարբեր էլույթներում, տարբեր ձևերով ևս ասացին, թե 70-80% սփյուռքահայեր չեն մասնակցում համայնքային կյանքին, այսինքն՝ առկա է արտագաղթ համայնքներից: Չկա տարբերակված աշխատանք, հաջողակ և խոցելի խմբերի հետ, մենք պետք է դա դարձնենք մեր աշխատանքային գործունեության հիմնական ուղղություններից մեկը, ուժացմանը մեծապես նպաստում են խառնամուսնությունները, մայրենի լեզուն չիմանալը, փակվող հայկական դպրոցները, նվազող աշակերտների թիվը: Առանձնակի հոգածության առարկա պետք է դառնան պատմամշակութային ժառանգության պահպանումը, շարունակվում են վայրագության դրսևորումները մեր արժեքների նկատմամբ Ադրբեջանում, Թուրքիայում, Մերձավոր Արևելքում: Մյուս կողմից ունենք երկրներ և տարածքներ, որտեղ գրեթե հայեր չկան, բայց հայկական պատմամշակութային ժառանգությունը առկա է և դրանց պահպանումը հարցականի տակ է դրված. դա Սուդանն է, Եթովպիան, Եգիպտոսում է արդեն դժվարություններ առաջանում, Հնդկաստանն է և այլն:

Փաստորեն մենք հռչակել ենք հայկական սփյուռքը որպես Հայաստանի ազգային անվտանգության բաղադրիչ, և այս կարևորագույն փաստը հետագայում ամրագրել ենք նաև ՀՀ սահմանադրությունում: Մենք հայկական սփյուռքը բարձրացրել ենք սահմանադրական աստիճան և այստեղ ամենագլխավոր խնդիրը հայապահպանության հարցն է, երկրորդը՝ հայրենադարձության, որի մասին երեկ խոսեց Հանրապետության

Նախագահը և, երրորդը՝ ու մեզ համար ամենօրյա աշխատանքի աղբյուրը, լեզվի, հայկական պատմամշակութային արժեքների պահպանման և երիտասարդության կրթության ու դաստիարակության հարցերն են: Այս բոլոր հարցերը լուծելու առումով, մենք երեք ռազմավարական խնդիրներ ենք շեշտադրում. առաջինը հայապահպանությունն է, որը հիմնված է 5 գլխավոր սյուների վրա՝ լեզուն, հայ դպրոցը, հայ մշակույթը, հայ ընտանիքը և հայ հավատքը:

Ապա՝ հայ ներուժը հայտնաբերել և հայրենիքի և սփյուռքի զարգացման համար օգտագործելը, և, վերջապես, մշակել այնպիսի ծրագրեր, որոնք իրոք կարող են նպաստել հայրենադարձությանը: Հայաստանը հռչակվել է համայն հայության հայրենիք, վկան նաև մեր այսօրվա համաժողովի մասնակիցների մեծաթիվ լինելն է: Պետք չէ մոռանալ, որ մենք՝ որպես պետություն, հռչակել և հայտարարել ենք. հայ է այն մարդը, որ իրեն հայ է զգում: Հայապահպանության բոլոր տարրերը, պարամետրերը օգտագործելով՝ մենք իրավունք չունենք լեզուն չիմացող կամ ոչ իր կամքով կրոնական բարդությունների մեջ ընկած հային հեռացնել մեզանից: Հակառակը, մեր խնդիրն է բերել նրանց դեպի հայություն, հայկական համայնք: Հայոց պետության գլխավոր սկզբունքը սփյուռքի հետ աշխատանքներում (դա հնչեց նաև մեր համաժողովի ընթացքում) հետևյալն է. այն երկրներում, որտեղ դուք ապրում եք, պետք է լինեք օրինապաշտ քաղաքացի, ինտեգրվեք տվյալ հասարակությանը, բարձրանաք այդ պետության քաղաքական, տնտեսական բարձունքներով, (ինչպես որ ունենք նախարարներ, պատգամավորներ, մշակութային գործիչներ), միաժամանակ շարունակեք կառչած մնալ մեր հավատքին, մեր լեզվին, մեր պատմությանը, մեր մշակութային արժեքներին: Եվ դա է պատճառը, որ մեր գլխավոր բանաձևը, որով փորձում ենք աշխատել մեր հայրենակիցների հետ, հետևյալն է. ճանաչել, որովհետև եթե մենք իրար չճանաչենք, չենք կարող միմյանց վստահել, պատահական չէ, որ համաժողովի վերնագիրը վստահությունն է նաև, իսկ եթե կա ճանաչողություն և վստահություն, ուրեմն կարող ենք նաև գործակցել: Համագործակցության արդյունքում է, որ կձևվեն ծրագրեր, գաղափարներ, նախագծեր, որոնք կյանքի կկոչվեն Հայրենիքում և սփյուռքում և մեզ պետ է առաջնորդի թումանյանական կարևորագույն պատգամը՝ «Գործն է անմահ, լավ իմացեք»: Ինչ վերաբերում է մեր աշխատանքի հիմնական սկզբունքին, ապա՝ դա երկխոսելն է, լսելն է, կազմակերպելն է, առաջարկություններ անելն է, բանավիճելն ու ծրագրեր մշակելն է:

Հայապահպանությանը վերաբերող 4 նիստերին, որոնց մասին մենք այստեղ քննարկեցինք, պետք է ավելացնենք նաև հայ ընտանիքը, հայրենիքի հետ զգացական կապը, մեր անուն-ազգանունները, մեր պատմական հիշողությունը, դրա փոխանցումը երիտասարդությանը: Այս և նման հարցերի շուրջ ելույթ են ունեցել 27 հոգի, 60-ից ավելի հարցադրումներ են արվել, և հիմնական շեշտադրումը եղել է մայրենի լեզվի պահպանությունը: Շատ ուրախ եմ, որ հայոց լեզվի պահպանման նկատմամբ կա

այսպիսի մտահոգություն, որովհետև ուրիշ ու՞մից մենք պետք է պահանջենք պահպանել լեզուն, եթե ոչ մեզանից, աշխարհում միայն հայերենով խոսում են հայերը, հետևաբար, եթե մենք մեր լեզուն չպահենք, չպահպանենք, չփոխանցենք սերունդներին, որևէ մեկից պահանջել չենք կարող: Իսկ այն հսկայական ներուժը, որ մենք ունենք, կարող ենք մեր աստվածային լեզուն պահել, պահպանել, և ինչպես Վահան Տերյանն էր ասում «Հայոց լեզուն, մեր հոգին է», եթե հոգին կենդանի է ուրեմն կենդանի է նաև ազգը, իսկ Մեծն Իսահակյանը ասում էր՝ «Հայոց լեզուն մեր հայրենիքն է», անգլիացի մեծանուն գրող Բայրոնն էլ նշում է. «Աստծո հետ խոսելու միակ լեզուն հայերենն է» (դրա համար գնաց և Վենետիկում հայերեն սովորեց): Հետևաբար ինչպես այսպիսի փառահեղ, ոսկեդենիկ լեզուն չպահենք և չտարածենք երիտասարդների շրջանում: Մենք արևելահայերենի հետ կապված ունենք լուրջ խնդիրներ, արևմտահայերենը ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից ճանաչվել է առանձնապես վտանգված լեզու, և մինչդեռ արևմտահայերենով խոսողները 2 մլն-ն են, թեև գնալով պակասում են, իսկ դպրոցներ հաճախում են 150-170 հազար հայ, սփյուռքում արևելահայերենի կրողների թիվը 5 մլն. է, սակայն դպրոցներում արևելահայեր սովորող աշակերտների թիվը չնչին է: Եվ, բնականաբար, մենք պետք է կարողանանք, եթե արևելահայերենին լուրջ վտանգ քիչ է սպառնում, ապա արևմտահայերենի պահպանումն անհամեմատ ավելի դժվար է, նրա կրողներին մենք պետք է փորձենք ավելացնել: Այստեղ տարբեր կարծիքներ են եղել, կան մարդիկ, որ գտնում են, թե արևմտահայերենով Հայաստանը պետք է չզբաղվի, կան մարդիկ, որ գտնում են, որ արևմտահայերենով պետք է Հայաստանը նաև զբաղվի, սակայն, սիրելի՛ հայրենակիցներ, ուզում եմ մեկընդմիջտ հետևյալ բանաձևը չմոռանաք. Հայաստանի Հանրապետության սահմանադրությամբ ամրագրված է՝ Հայաստանի պետական լեզուն Հայերենն է, չի գրված արևելահայերենն է: Դա նշանակում է և՛ արևելահայերեն, և՛ արևմտահայերեն և՛ բարբառներ, որոնք կազմում են մեր ամբողջական լեզուն: Սակայն մեր պաշտոնական լեզուն արևելահայերենն է, պաշտոնականը և պետականը տարբեր բաներ են, հետևաբար, հայոց պետությունը, մեր ազգային արժեքը՝ արևմտահայերենը, պետք է պահի, պահպանի, պետականորեն զարգացնի: Եվ պատահական չէր, որ ամիսներ առաջ ՀՀ Նախագահի մոտ քննարկումներ եղան և հանձնարարական տրվեց ՀՀ կրթության և գիտության նախարարությանը և սփյուռքի նախարարությանը՝ մշակել ռազմավարություն արևմտահայերենի զարգացման, անադարտության պահպանման և տարածման առումով: Մենք գիտությունների ազգային ակադեմիայի, լեզվի ինստիտուտի հետ ստեղծել ենք 3 հանձնախմբեր՝ սփյուռքի մեր լավագույն մասնագետներից, և հայաստանյան մասնագետներից բաղկացած, որոնք մշակում են հայերենի երկու ճյուղերի մերձեցման խնդիրները, արևմտահայերենի անադարտության հիմնախնդիրները, որովհետև արևմտահայերենը Պոլսում, Լիբանանում, Ֆրանսիայում կամ ԱՄՆ-ում ունի որոշակի տարբերություններ: Մենք պետք է կարողանանք արևմտահայերենը մաքուր պահելու խնդիրը լուծել: Եվ, վերջապես, երրորդ խնդիրը,

ստեղծված է աշխատանքային խումբ, որ մտածում է ուղղագրության խնդիրների մասին: Այնպես որ, այս աշխատանքները մենք պետք է շարունակենք: Ասեմ նաև, որ հայապահպանության խնդիրներին մենք աշխատել ենք գիտական մոտեցում ցուցաբերել. մեր 104 հայագիտական կենտրոնների մի խմբի, ինչպես նաև Հայաստանի Ակադեմիայի, ԵՊՀ-ի հետ մենք տարեկան 12 հետազոտություն ենք անցկացնում, համաժողովներ ենք գումարում՝ արևմտահայերենին նվիրված, իսլամացած հայերին նվիրված, խառնամուսնություններին նվիրված, պատմական հիշողությունը երիտասարդությանը փոխանցելուն նվիրված և այլն և այլն, և 104 հետազոտություն է կատարվել, որոնց հիմնական մասը փոխանցվել է սփյուռքյան համայնքներին: Հայապահպանության համար մեծ նշանակություն ունի նաև ամեն տարի տպագրվող հայկական սփյուռքի տարեգիրքը, համաժողովի ընթացքում ևս հարցեր բարձրացվեցին տարեգիրքը ավելի ընդլայնելու, խորացնելու առումով, որովհետև այն փորձի փոխանակման, պատմության, և հանրագիտարանային արժեք ունեցող գիրք է: Եթե Հայաստան-Սփյուռք համաժողովների ընթացքում կոնկրետ նյութեր քիչ են քննարկվում, ապա մասնագիտական համաժողովների ընթացքում, որոն տարվա մեջ կազմակերպում ենք 5-6 ուղղություններով՝ քննարկումները և առաջարկները արվում են ավելի փոքր շրջանակներում՝ նեղ մասնագետների կողմից: Ուզում եմ նաև ձեր ուշադրությունը հրավիրել հայապահպանության գործում նշանակալի ավանդի համար կազմակերպվող մրցանակաբաշխություններին: Ինչու՞ ենք մենք սա կազմակերպում. որպեսզի մենք աշակերտներին, ուսուցիչներին, հասարակական կառույցներին շահագրգռենք, նույնիսկ լավագույն հայ ընտանիք մրցույթն է անցկացվում, այս ամենը համայնքներում աշխուժություն բերելու համար է: Այս առումով այստեղ հավաքված մեր հայկական բոլոր կառույցների ներկայացուցիչներին խնդրում եմ, որ օգնեն ամենամյա այս մրցանակաբաշխությունը դառնա մասսայական և բոլորս միասին փորձենք մասնակից դառնալ, յուրաքանչյուր համայնք իր ներկայությունը բերի: Հայապահպանության հզոր դարբնոց է «Արի Տուն» ծրագիրը: Այս ծրագիրը կազմակերպված փայլուն ծրագիր է, որին մասնակցած յուրաքանչյուր երիտասարդ «դատապարտված» է հայ մնալու:

Միրելիներս, ինչքան էլ դուք դրսում, հեռվում երիտասարդին կամ երեխային պարտադրեք խոսել հայերեն, իմանալ Հայրենիքի մասին, միևնույն է վերացական պատկերացումները չեն կարող երեխայի մեջ հոգեկան այնպիսի զգացում առաջացնել, ինչպես այն, որ երեխան գալիս է, ոտք է դնում հայկական հողին, տեսնում է իր աչքերով Արարատը, ձեռքերը լվանում է Սևանում, իր մոմն է վառում Սուրբ Էջմիածնում, խոնարվում է Ցեղասպանության հուշարձանին, որից հետո այդ երեխան այլևս հայ է մեծանում: Ուրեմն այս մտածողությունը տարածենք համայնքներում և հասնենք նրան, որ յուրաքանչյուր երիտասարդ գա և տեսնի Հայրենիքը, դա մեր կարևորագույն պատասխանատվությունը և պարտավորությունը պետք է համարենք ապագա սերնդի

առջև: Մշակութային բաժնում երկար քննարկվեց հայկական մշակութային ժառանգության մասին, խոսվեց մշակույթի ուժի մասին, և այն մասին, թե մշակույթը ինչպես կարող է երիտասարդին հայ պահել: Մենք պատրաստ ենք Հայաստանից պարուսույցներ, երգիչներ ուղարկել, որ խմբեր ձևավորվեն, որ երիտասարդությանը համախմբենք, որովհետև պարախմբերը, երգչախմբերը նաև հայկական դպրոց են դառնում: Այդ երեխան և՛ հայերեն է լսում, և՛ հայ մշակույթի ուժով շարունակում է հայ մնալ: Նախարարության կողմից կազմակերպված «Իմ Հայաստան» փառատոնով անցյալ տարի աննախադեպ արդյունք գրանցեցինք. 49 պարախումբ եկավ, ես շնորհակալ եմ, որովհետև պարախմբերի, երգչախմբերի, տեղափոխումը բավականին ծախսատար է: Սակայն եթե ցանկություն լինի, մեկ տարի, երկու տարի շարունակ կարելի է նաև այդ գումարները հայթայթել, որովհետև միայն դրա միջոցով մենք կարող ենք հազարավոր երիտասարդների ծանոթացնել Հայրենիքին, իրենց մշակութային գիտելիքները ներկայացնելով՝ հպարտություն ներշնչենք նրանց: Մեր համաժողովին հաջորդում է «Երգում ենք Կոմիտաս» փառատոնը, և ինչն է ուրախալին. այն, որ մեր հայկական կազմակերպություններն ու մշակութային կենտրոնները ճապոնացուն, ավստրալացուն, հույնին, կորեացուն սովորեցնում են Կոմիտաս երգել: Կոմիտասը հայերենով են նրանք երգում, ուրեմն մենք պետք է հայկական մշակույթը ոչ միայն փոխանցենք մեր երիտասարդությանը, այլև կարողանանք փոխանցել օտարներին: Ուզում եմ նաև խոսել այն ծրագրի մասին, որը քննարկման առարկա դարձավ երեկ. դա «Մփյուռք ամառային դպրոց»-ն է: Մեր այս ծրագիրը 5 տարի է գործում է ԵՊՀ-ի բազայի վրա և ունի 5 ուղղություններ. հայերենի արագացված ուսուցում՝ անվճար, մեկ ամիս շարունակ Հայաստանում ուսուցանում ենք հայոց լեզու երեխաներին, երիտասարդությանը, մեծերին: Խնդրում եմ այս ծրագրին ուշադրություն դարձնեք, ուղարկեք, որ նրանք գան և Հայրենիքում սովորեն մայրենին: Երիտասարդ առաջնորդների դպրոց, երիտասարդ լրագրողների դպրոց, ուսուցիչների վերապատրաստում և այլն: Հաջորդը, որի վրա համաժողովում ուշադրություն դարձվեց, հատկապես «Մեր մեծերը ծրագիրն է: Պատահական չէ, որ մենք այս ծրագիրն իրականացնում ենք, որպեսզի հայ մեծերով, հայ երիտասարդը հպարտ զգա: Դրանով մենք նպաստում ենք երիտասարդության, կրթության և դաստիարակության խնդիրների լուծմանը: Երեկ այստեղ ներկայացվեց, որ մենք ստեղծարար ժողովուրդ ենք: Այո՛, մենք պետք է կարողանանք յուրաքանչյուր երիտասարդի տեղեկացնել, թե մեր ազգը ինչպիսի մեծություններ ունի կրթության, առողջապահության, գիտության, նորարարության, բիզնեսի և այլ ոլորտներում, և թե նրանք իրենց մտքի ուժով ինչպես են ազդել աշխարհի քաղաքակրթության վրա. մեր երիտասարդները պետք է դաստիարակվեն ոչ թե զոհի հոգեբանությամբ, ոչ թե փոքր ազգ լինելու զգացողությամբ, այլ հզոր, խոշոր ազգի, տաղանդավոր ազգի զավակ լինելու զգացումով:

Այստեղ տեղին է խոսել մեր պատմական հիշողության մասին. իհարկե Ցեղասպանության մասին, որը հայապահպանության կարևորագույն համախմբման առանցքներից է դարձել: Ցավում եմ, որ քիչ խոսվեց, կամ գրեթե չխոսվեց Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագրի սկզբունքների մասին: Մենք պետք է այդ սկզբունքները ամեն օր, ամեն ժամ վառ պահենք համայնքներում, երիտասարդության շրջանում (հիշում եմ և պահանջում) և համայնքի միջոցով նաև երկրների քաղաքական պետական մարմիններում, և փոխանցենք սերունդներին: Պատմական հիշողությունը ո՛չ ծանրություն է, ո՛չ բեռ է, ո՛չ այստեղից այնտեղ փոխանցելու դժվարություն ունի, դրա համար մենք պետք է մեր բոլոր ձեռնարկներում կարողանանք այն փոխանցել երիտասարդությանը: Պատահական չէ, որ 100-րդ տարելիցից հետո չդադարեցին Ցեղասպանության ճանաչման արշավը, և ոչ էլ այն ձեռնարկները, որ դուք ակտիվորեն կազմակերպում եք ամբողջ սփյուռքում, տարբեր երկրներում: Այս առումով աշխատանքները բաժանվում են 7 ուղղությունների՝ քաղաքական՝ այսինքն պետք է շարունակել պայքարը այդ ուղղություններով, երկրորդ՝ քարոզչական ոչ թե միայն մեր հայկական թերթերը, այլ հատկապես օտար թերթերը ու օտար լրատվամիջոցները պետք է դրանով զբաղվեն: Ես չեմ կարող այս պահին չհիշել Արմեն Մազլումյանին Եգիպտոսից, որը մի քանի խումբ արաբներ՝ լրագրողների բերեց, որոնք բոլորովին փոխեցին արաբական աշխարհի վերաբերմունքը հայկական Ցեղասպանության նկատմամբ: Հաջորդը՝ գիտաժողովների, համաժողովների կազմակերպումն է, հրատարակությունների նախաձեռնումը, բնականաբար՝ կարևոր ուղղություն է մշակութային ձեռնարկները, թանգարանները և եկեղեցական միջոցառումները, խաչքարեր, հուշարձաններ տեղադրելը: Այս բոլոր գործիքները պետք է կիրառել՝ Ցեղասպանության փաստը մոռացության չտալու համար: Այստեղ ուզում եմ ձեր ուշադրությունը հրավիրել մեր պատմական ժառանգության պահպանման խնդրին, որի հիմնական բաղադրիչը թվայնացումն է որովհետև դրա միջոցով նաև մենք ներկայանում ենք աշխարհին. այս առումով անելիք և ասելիք ունենք: Մենք տարեկան մոտավորապես 70 հազար կտոր գիրք ենք փոխանցում մեր սփյուռքյան դպրոցներին, և այստեղ նույնպես ակնկալում եմ ձեր ակտիվությունը, ձեր առաջարկները, որպեսզի նպատակային դառնան այս աշխատանքները: Իսկ դպրոցը առանց ուսուցչի չի կարող լինել, և պատահական չէր, որ համաժողովի ընթացքում հայկական դպրոցի ուսուցչի մասին շատ խոսվեց, ուսուցչի վարձատրության մասին ևս, և, հետևաբար, մենք ձևեր պետք է գտնենք՝ հիմնադրամներ ստեղծելով, բարերարներ գտնելով, ոգևորելով, դիմելով տվյալ երկրի կառույցներին, կազմակերպություններին, որպեսզի հայ ուսուցիչը բարձր վարձատրվի, որպեսզի հայ ուսուցիչը ավելի ոգևորված դասարան մտնի և մեր աշակերտներին կարողանա հայապահպանության գաղափարներով ոգևորել լեզու սովորեցնել: Հաջորդ հարցը վերաբերում է հայ ուսուցչի վերապատրաստմանը Հայաստանում: 70 տեղ Հայաստանը անվճար տրամադրում է սփյուռքին, որպեսզի



երիտասարդները գան, սովորեն այստեղ: Համայնքների շա՛տ սիրելի ղեկավարներ, դիմելով ձեզ՝ խնդրում եմ սերնդափոխության հարցը քննարկել համայնքում, մեր հայոց լեզվի, հայոց պատմության, կրոնի պատմության ուսուցիչներին փոխարինողներ կարողանանք պատրաստել, իսկ Հայոց պետությունը պատրաստ է համալսարաններում նրանց անվճար կրթություն ապահովել, ուղղակի սպասում ենք, որ դուք երիտասարդներ գործուղեք Հայաստան:

Հայապահպանության ուղղության չորրորդ բաժինը վերաբերում էր սիրիահայությանը: Ես ուզում եմ այստեղ անսահման շնորհակալություն հայտնել Միրիայում շտապօգնության և վերականգնման կառույց ստեղծած մեր հոգևոր ղեկավարներին, որոնք այստեղ ներկա են և ամեն ինչ անում էին՝ Միրիայում ռուսների տակ հային պահելու, պահպանելու և օգնելու համար. Շահան սրբազանը, Արմաշ սրբազանը, Կաթողիկե եկեղեցու Միրիայանը Պետրոս սրբազանը, վերապատվելի Սելիմյանը իսկ նրանց միացել են մեր դասական կուսակցությունները և, իհարկե, բարեգործականը: Այս ամենի շնորհիվ Միրիայում ապրող մեր հայրենակիցները պահում են դպրոցը, պահում են եկեղեցին, պահում են հայկական մշակույթը: Միրիայում և Հայաստանում ապրող հայերին օգնում էք դու, ողջ սփյուռքը և սիրիահայությունը գիտի, որ իր թիկունքին Հայոց պետությունն է և սփյուռքը: Շատ ուրախ էի երեկ լսել, որ սիրիական հիմնախնդիրը ոչ միայն պետության, ոչ միայն սիրիահայության, այլ ամբողջ հայության խնդիրն է: Արտակարգ իրավիճակում հայտնված իրաքահային, սիրիահային, մենք պետք է ամեն ինչով ապահովենք: Դուք գիտեք, որ 22000 սիրիահայ է եկել Հայաստան, և ես ունեմ նաև քաղաքական հանձնարարություն: ՀՀ Նախագահը երկու հանձնարարություն է տվել. առաջինը՝ մենք պետք է լինենք սիրիահայի կողքին, որտեղ էլ նրանք լինեն՝ Միրիայում, Միրիայից դուրս, թե Հայաստանում, և երկրորդ՝ սիրիահայը Հայաստանում փախստական կոչվել չի կարող, նա եկել է իր Հայրենիք, իր Հայաստան և անմիջապես քաղաքացի պետք է դառնա: Անկախ նրանից՝ թե որոշ մարդիկ խոսում են, որ Հայաստանի անձնագիրը օգտագործեցին Շվեդիա կամ Կանադա հասնելու համար, պետք է փաստեմ, սիրելիներս, որ ընդհամենը 3500 մարդ է ապրում Շվեդիայում, և մոտավորապես 5000 Կանադայում: Իսկ 100 հազարից 22 հազարը ապրում է Հայաստանում: Հետևաբար հայրենադարձվեցին մեր հայրենակիցները, հարմարվեցին Հայրենիքում, թեև շատերը ասում էին, որ հենց Միրիայում մի քիչ վիճակը կայունանա, կվերադառնան: Ես գրեթե համոզված եմ, որ նրանք մնալու են, քանի որ ամեն օր եմ հանդիպում մեր հայրենակիցներին: Նրանք Հայաստան են բերել աշխատանքային մշակույթ, համեստ են, խելացի, կազմակերպված են, մենք՝ հայաստանցիներս, նրանցից շատ բան ունենք սովորելու, 4-5 տարում այնպիսի բիզնեսներ են դրել, որ մերոնք տարիներով չեն անում դա: Շնորհակալություն Հայաստանում հաստատված մեր սիրիահայերին: Այո, ճիշտ է ասված «եթե գաղթ, ապա՝ Հայաստան»: Այս կոչը պետք է

ամենուր կրկնել, սակայն դա չի նշանակում, որ մենք սիրիահայերի հետ կապված խնդիրներ չունենք, թեև բնակարանային և բիզնես ծրագրերի առումով դեռ ինչ-ինչ խնդիրներ կան, և դրա համար մենք ամեն ինչ անելու ենք, նրանց ներգրավելու, ընտանեկան բիզնեսը զարգացնելու առումով: Ես չեմ կարող շնորհակալ չլինել նաև մեր բոլոր հայկական բարեգործական, մարդասիրական, կառույցներին, կազմակերպություններին, միջազգային կազմակերպություններին, այն երկրներին, որոնք ամեն ինչով փորձում են օժանդակել Հայաստանում այդ խնդիրները կարգավորելուն: Ուզում եմ անպայման ձեզ հետ միասին անսահման շնորհակալություն հայտնել Սիրիայում ՀՀ դեսպան պարոն Փոլադյանին, Հալեպի նախկին հյուպատոս պարոն Գևորգյանին, որոնք ռումբների տակ մնացել և մեր հայրենակիցների կողքին են: Հալեպում չկար ոչ մի երկրի դիվանագիտական հաստատություն, բացի Հայաստանից: Դա Հայոց պետության, ՀՀ Նախագահի քաղաքականությունն է, ըստ որի՝ ոչ թե պետք է հետ կանչել դեսպաններին, այլ հակառակը՝ դեսպանները պետք է մնան, ուժ տան մեր հայրենակիցներին: Դրա համար կրկին շնորհակալ ենք մեր դիվանագետներին:

Շնորհակալություն ուշադրության համար, իսկ այժմ դիտեք ֆիլմ նվիրված մեր անվանի հայերին:

**ՀՀ սփյուռքի նախարար  
Հրանուշ Հակոբյան**